

«Հոգեբանությունը և կյանքը» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ-ի նիստի որոշման (արձ. N25)՝ դոկտորական և փեկնածուական առեմախոսությունների համար

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ
PSYCHOLOGY AND LIFE

1-2
2008



ի
-
Տ
Ա
Լ
Ը
Ի
Ի
Ի
Ղ
Ի
Ե,
Ն
Ղ:
ի
Ի
Ի
Ն,
Ի
Ի-
Ի-
ր
ն
Ղ:
ի
Լ-
Լ-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԻԱՆԱ ԱԿԵՏԻՅԱՆ ՕՃՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՅՄԱՅՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ	3
---	---

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՑԱՆ, ՀՐԱԶՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՍԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈԳԵԱՆՏՈՐՈՇԻՉ ՀԱՍԱԿՈՂՄԱՆԻ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՆԽՆԴԻՐԸ	9
---	---

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	13
ԱԼԻՆԱ ԳԱԼՍՅԱՆ ՀՈՒՅՁԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՊԸ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՄՈՏ	17
ԳԵՂԻՆԵ ԽԱԶՍՏՐՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՌԵՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՏԱՈՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ, ԴԻՂԱԿՏԻԿ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	22
ԼԱՈՒՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆՈՐ ՄԻՋԱԿԱՅՐՈՒՄ ԵՐԵՎԱՅԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՁԵԿՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	30
ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 12-16 ՏԱՐԵԿԱՆ ՇՆԽՄԱՏԻՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐՈՊՊԱՏՃԱՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	36

ԱՆՁԻ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՂԻԳԻ ՊԱՊՈՅԱՆ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈԿՄԱՆ ՏՈԼԵՐԱՆՏ ԴՐՄԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ	41
ЛИЛИТ БАГДАСАРЯН ИЗМЕНЕНИЯ ЛИЧНОСТНЫХ ПРОЯВЛЕНИЙ В ПРОЦЕССЕ ПЕРЕХОДА ОТ СОСТОЯНИЯ СОЦИАЛЬНОЙ ДЕЗАДАПТАЦИИ К СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ	46
ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ ԱՄՈՒՆԻՆԵՐԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԴՐՄԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՏՎԱԾ ՏԻՊԵՐԸ	53

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԱ ՆԿՈՏՈՒՄՅԱՆ ՕՐԿՈՐԴԻՆ ԾԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՏՈՐ ԳՈՐԾՍՈՒՈՒԹՅԱՆ ԿՐՄԱԿՐՔՄԻ ՓՈՒԳՈՒՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	57
ԽԵՐԱՆ ԱՆԻՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ ԲՈՒՅՁՈՒԿԱՆ ԱՏՈՐՈՒՆԵՐԻ ՅՈՒՆԻՍ ԸՈՒՐԸ	59
ՄԱՐԻՆԵ ԿՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԿՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԿՐ ԶԵ ԱՆՁԻ ԱՆՆԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՐՄԱՏԵՂԵՏՅԱՆ	65

**ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐ**

**ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ,
ՀՐԱՉՅԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ,
ՍԱՀԱԿ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ,
ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ՀՈԳԵԱԽՏՈՐՈՇԻՉ
ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՄՈԴԵԼԻ
ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Հոգեբանության զարգացման ժամանակակից փուլում տեսական նոր ընդհանրացումների և հայեցակարգերի ձևավորումը պայմանավորված է ոչ միայն փորձարարական աշխատանքի արդյունքով, այլև որակապես նոր մեթոդաբանական հայեցակարգի մշակման անհրաժեշտությամբ: Վերջինիս նշանակությունն է ապահովել էմպիրիկ տվյալների ու տեսական հիմնադրույթների միջև առավել համապատասխան, ճշգրիտ կապը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի հայեցակարգի կառուցման հիմնարար պայման կարող են հանդիսանալ հոգեճանաչման և հոգեախտորոշման մեթոդիկաներում յուրահատուկ, համակողմանի մոդելների մշակումն ու կիրառումը հարմարեցնելով հոգեբանական գործունեության գիտակրթական և կիրառական ոլորտներին: Մեր կողմից կատարված և մի շարք այլ հետազոտությունները (1, 2, 5), ինչպես նաև այժմյան հետազոտական խմբի կողմից իրականացված մասնագիտական գրականության վերլուծությունը բացահայտեցին, որ հոգեբանության առանցքային բնագավառներից մեկը՝ հոգեախտորոշումը, գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված և արդի պահանջներից ելնելով, կարիք ունի գիտահետազոտական մոտեցումների թարմացման: Հատկապես այն հրատապ է համակարգչային ժամանակակից տեխնոլոգիայի կիրառման առումով: Այս առումով հոգեախտորոշումը, հանդիսանալով և տեսական, և գործնական, ինչպես նաև կիրառական բնագավառ, թույլ է տալիս լայն հնարավորություններով իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունք կհանդիսանան հոգեախտորոշիչ համակողմանի մոդելի մշակումն ու կիրառման ձևերը՝ ինչպես գիտական հետազոտություններում, այնպես

էլ ուսուցման գործընթացում և հոգեբանի գործնական աշխատանքի ծրագրման ու կազմակերպման աշխատանքներում:

Մինևույն ժամանակ հոգեախտորոշումն ինքնին հանդիսանում է գիտահետազոտական աշխատանքներում լայնածավալ գործառույթների իրականացման համակարգ:

Այս խնդրի լուծման համար նախատեսվող գիտահետազոտական աշխատանքներում առանձնահատուկ տեղ ենք հատկացնում գիտափորձի համակարգչային ծրագրավորմանն ու հոգեբանական փորձարարական մեթոդիկայի մոդելավորմանը: Վերջիններս հնարավորություն կընձեռեն առավել արդյունավետ կերպով իրականացնելու հետազոտական, կիրառական և ուսումնական գործընթացների կազմակերպումը: իրականացումը և արդյունքների վերահսկումը: Այստեղ առաջին պլան է մղվում հոգեբանական բազմաբնույթ թեստերի թարգմանության, ստանդարտացման, հարմարեցման ու տեղայնացման հիմնախնդիրը:

Ինչպես նաև ավտոմատացված հոգեախտորոշիչ համակարգերի կառուցման ժամանակ առավել կարևոր է մարդ-մեքենա ինտերֆեյսի կազմակերպումը, որի արդյունավետությունը որոշվում է ոչ այնքան համակարգի մեքենայական մասով, որքան ախտորոշման ենթարկվողի անհատական-հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական հատկությունների ու համակարգի փոխազդեցության համաձայնեցվածությանը: Այստեղ առավել կարևորվում է համակարգչայնացված մեթոդիկաների բովանդակային վալիդության ապահովումը, քանի որ համակարգչայնացումը նոր հնարավորություններ է մերձուժում հոգեախտորոշման ինչպես մեթոդական, այնպես էլ օպերատիվ-մոլդ-բովանդակային ոլորտներ: Ամիստիբ լիզեր մեթոդիկաները, որոնք ուղղված են ըրականացման ավտոմատացված ռեժիմի, կարիք ունեն հավելյալ հոգեչափական մշակման:

Սենսոր դաշտի միասնությունը (դիսփլեյ, մոնիտոր), ստիմուլային նյութի ներկայացման ստանդարտությունը, հետազոտվողների պատասխանների ֆիքսման միանշանակությունը իրապես օգնում են գիտափորձի անկախությանը փորձարկողի սուբյեկտիվ ազդեցությունից: Ընդ որում, եթե անկախ փոփոխականների ազդեցությունը չի էլ բա-

ցառվում, ամեն դեպքում, այն հավասարակշռվում է այլ ցուցանիշների հետ: Այսինքն այստեղ կարելի է խոսել տարբեր հետազոտողների կողմից ստացված տվյալների իրական համեմատության մասին:

Ռուս հոգեբանների հրատարակություններում գործնական հոգեախտորոշման ներկա իրավիճակը գնահատվում է որպես ճգնաժամային (6, 8, 10): Հայաստանում հոգեախտորոշիչ աշխատանքներն ամբողջականության և համակարգայնության պակաս ունեն, ինչպես նաև հաճախ չեն համապատասխանում մեթոդական պահանջներին (թարգմանություն, տեղայնացում, հարմարեցում, համալրում, կիրառման մոդելի մշակում):

Հոգեախտորոշիչ հետազոտությունների մեթոդական ապահովումը շարունակում է էականորեն գերազանցել նրանց գործնական մակարդակը: Սա տեղի է ունենում գործունեության իրավաչափանիշային հիմքի լրիվ բացակայության և, հետևաբար, այդ գործընթացի պրոֆեսիոնալ-բարոյագիտական հսկողության ապամանրերում:

Հոգեախտորոշիչ մեթոդ թույլ է տալիս արձանագրել սուբյեկտի սկտիվությունը, նրա վարքի հատուկ մատուցարությունը, ինչպես սոցիալական (հոսթբանի և հետազոտվողի փոխազդեցությունը), այնպես էլ շարժառիթային և այլ իրավիճակների առանձնահատկությունները: Բացի այդ, հոգեախտորոշիչ մեթոդ միապում է նաև հոգեկառուցմանը չափազանց զուգընթացված: Անհուստեղի է համարվում զուգընթացումը զուգձեռն լուծումը մեթոդական պրոյեկտիվ տեխնիկաների և թեստմանի զարգացմանը ընդհանուր տեղայնների տարբեր տեսակետների համար սնման (3, 4, 8): Քարկ է ելնել այն հատուկ ուժանշանային տարբեր միջոցները ամենաապիելիորեն բերում են ճանաչման անկախ առարկա հանդիսացող օբյեկտի վերաբերյալ տարբեր մատրագրումների մեխուսափելի է դառնում մաթեմատիկական մոդելավորման մեթոդների կիրառումը: Այստեղից էլ բխում է հոգեչափման (psychometry) և հոգեճանաչման (psychodiagnostic) բարդ ու բազմանշանակ մեթոդաբանական հիմնախնդիրը, երբ անհրաժեշ-

տություն է առաջանում ձևայնացնել հոգեկան ֆունկցիաների դրսևորման չափագրումը, գրանցումը, համակարգումը որպես խնդրի ձևակերպման պայման: Մեր կարծիքով այս դժվարությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- անծի անհատականության (անկրկնելիության) գործոն, տարբերակման (դիֆերենցիացիա) մեթոդիկայի անկատարություն,

- հոգեկան ֆունկցիաների փոխկախվածության ն փոխհատուցման մեխանիզմների առկայություն.

- հոգեչափագրման գործընթացում ստանդարտ սանդղակների ստացման սկզբունքների անլիարժեքություն (հատկապես հաշվարկման սկզբի որոշման ոչ միանշանակության հարցը):

Գործնականորեն բոլոր հետազոտողների կարծիքները համընկնում են, որ միավոր օբյեկտի վիճակի ճանաչումը իրականանում է ընդհանուրի մասը գիտելիքների հիման վրա (7, 9, 10, 11): Այս իմաստով ախտորոշումը հանդիսանում է եզակի, կոնկրետ երևույթի ն ընդհանուր էության գիտական իմացության միջև ճանաչման ռատուկ միջանկյալ օղակ: Եհիտ է ցանկացած մոդել բնութագրվում է «արհեստականությամբ» և «սահմանափակությամբ», սակայն վերջիններս հնարավորություն են ընձեռում առավել տարբերակված և նպատակաուղղված կերպով իրականացնելու փորձարարական հետազոտություններ: Չանագան մոդելների ընդլայնված հոգեբանական ուսումնասիրությունը թույլ կտա համեմատական վերլուծություններ կատարել և, մաթեմատիկական բանաձևերի դուրսբերման միջոցով, հնարավորին ճշգրիտ ու գործնական լուծումներ տալ առաջադրված խնդիրներին:

Մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ նպատակը՝ զիճեակորել հետազոտական, պրոպագանդային ու ուսումնական գործընթացներում երանդագնատիկ համակողմանոր ծառայություններ մոդելի մշակման ն շտրոմատան սիտուաման անհրաժեշտությունն ու կատարությունը:

Առաջադրված նպատակի երագործումը անհրաժեշտ հարձրեց առաջնաաում լուծել հետևյալ խնդիրները՝ տրամաանորեն հիմնադրել և, ուսումնասիրման համառոցը, նա-

խապատրաստել անհրաժեշտ մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրել և ընտրել աշխատանքային մոդելի շրջանակներում ներառվելիք մեթոդիկաները, ինչպես նաև մոդելավորել և համակարգչայնացնել մեթոդական համալիրը (ծրագրավորում), ապա ուսումնական և հետազոտական ծրագրերում փորձարկել ստացված մոդելը:

Վերլուծելով ռագմաքանակ, տարաբնույթ մեթոդիկաներ (200–ից ավելի) և առ այսօր մեր կողմից կատարված նախնական, պիլոտաժ հետազոտությունների արդյունքները բացահայտեցինք, որ նույնիսկ ռայտնր և լայնորեն կիրառվող պրոյեկտիվ մեթոդիկաներից որոշները (Որոշախի մեթոդիկա, ԹԱԹ, անավարտ նախադասությունների մեթոդ և այլն) պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ հատկապես մեկնաբանման, վերլուծության, ներկայացման և համակարգչայնացման առումով:

Արդյունքում ակնկալում ենք ստանալ ստանդարտացված և տեղայնացված մեթոդիկաներ և համալրել դրանք, ապահովել վերջիններիս համակարգչային նմուշները, որոնց կիրառումը առավել մատչելի կլինի ինչպես հոգեբանության մեջ, այնպես էլ մյուս ոլորտներում հոգեբանական ծառայություն կամ աջակցություն կազմակերպելու գործում:

Փաստորեն, կունենանք համապատասխան մեթոդիկաների ընտրանի, որը ներառված կլինի աշխատանքային մոդելը կազմող ռամալիրում: Այն պետք է առավելագույնս ճշգրիտ, հավաստի տվյալներ ապահովի, ամբողջական կերպով արտացոլի առաջադրված արդի հիմնախնդիրները՝ հիմք հանդիսանալով մասնագիտական պիտանելիության որոշման, մասնագիտական պատրաստման ու վերապատրաստման աշխատանքների, ինչպես նաև հոգեբանական խորհրդատվության արդյունավետության բարձրացման համար: Ինչպես նաև, որպես աշխատայի տեսչական, ստացված մոդելի կիրառումը հոգեդիագնոստրիայում ևս մեկ խթան կհանդրսանա ադապտիվ գիտափորձերի զարգացմանը, երբ յուրաքանչյուր տիպի ախտորոշիչ առաջադրանքի ներկայացումը կախված է նախուղմերի կատարման արդյունավետությունից: Մեզ համարեղ կարևոր է ոչ

այնքան գործողության արդյունքը, որքան դրա իրականացման գործընթացը, որը հստակ և արեկվատ (համարժեք) արտացոլում է համակարգիչը:

Ամփոփելով նշենք, որ առաջադրված խնդիրների լուծումը կօգնի հոգեախտորոշիչ արդի պահանջներին հարիր նոր մոտեցումներ հաստատել համապատաս-

խանեցնելով ժամանակակից գիտության և տեխնիկայի ստանդարտներին: Բնագավառային հոգեբանության ախտորոշիչ և կիրառական տեխնոլոգիան բովանդակային առումով կհարստանա, իսկ հոգեբանական մեթոդներն առավել համահունչ և հուսալի կդառնան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղուզումցյան Ռ.Վ., Ստեփանյան Ռ.Ռ., Մասնագիտական հոգեբանական ընտրություն. Եր., ԵՊՀ, 1988, 24 էջ:
2. Ավանեսյան Հ.Մ., Ժամանակակից հոգեախտորոշման գիտագործնական հիմնախնդիրները, Հոգեբանությունը և կյանքը, Եր., «Ձանգակ-97», 2005, էջ 119-128:
3. Ավանեսյան Հ.Մ., Սպրտի կիրառական հոգեբանություն, Եր., «Էդիթ Պրինտ», 2001, 122 էջ:
4. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., «Ձանգակ-97», 2002, 392 էջ:
5. Կարապետյան Վ., Հոգեբանության խնդիրների ժողովածու, Եր., «Ձանգակ-97», 2004, 226 էջ:
6. Веденов А.А., Моделирование элементов мышления, М., Наука, 1988, 158 с.
7. Голицын Г.А., Петров В.М., Информация—поведение—творчество, М., Наука, 1991, 221 с.
8. Дружинин В.Н., Когнитивные способности. Структура. Диагностика. Развитие, М. СПб., Per Se. Иматон, 2001, 224 с.
9. Корнилова Т.Б., Тихомиров О.К., Принятие интеллектуальных решений в диалоге с компьютером, М., Изд. МГУ, 1990, 198 с.
10. Крылов В.Ю., Геометрическое представление данных в психологических исследованиях (отв. ред. Курдюмов С.П.), М., Наука, 1990, 119 с.
11. Искусственный интеллект: Справочник, под ред. Захарова В.Н., М., Радио и связь, 1990, 368 с.

ПРОБЛЕМА РАЗРАБОТКИ УНИВЕРСАЛЬНОЙ ПСИХОДИАГНОСТИЧЕСКОЙ МОДЕЛИ

Г. Аванесян, Г. Ованнисян, С. Ованнисян, Д. Айрапетян

Наш теоретический анализ показал, что исходя от научно-технического прогресса и актуальных требований, психодиагностика нуждается в обновлении научно-исследовательских подходов. Особенно она актуальна в связи с применением современных компьютерных технологий. Психодиагностика, являясь одновременно и теоретической, и практической, а также прикладной отраслью, позволяет более обширно реализовать исследовательские работы, результатом чего будут разработки и способы применения психодиагностической универсальной модели. Последнее будет эффективно использоваться как в научных исследованиях, так и в процессе обучения и организации практических работ психолога. Решение предложенных задач поддержит новейшие подходы, способствуя констатации стандартов современной психологической науки и техники.

ISSUE OF PSYCHO-DIAGNOSTIC UNIVERSAL MODEL DEVELOPMENT

H. Avanesyan, H. Hovhannisyann, S. Hovhannisyann, D. Hayrapetyan

Our theoretical analysis has shown that proceeding from scientific and technical progress and actual requirements, psycho-diagnostics requires updating scientific approaches. It is especially actual in connection with application of modern computer technologies. Psycho-diagnostics, being a theoretical, practical, as well as applied field, supposes more extensive research the result of which will be the development and ways of application of psycho-diagnostics universal model. This will be effectively used both in scientific research, and during training and the organization of the psychologist's practical work. The solution of the offered problems will support the newest approaches, promoting ascertaining of standards of modern psychological science and techniques.